



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





# ԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



40987  
113 APR 2011

Դ լու բնիքայից Զարմայր Տէր-Դաւթեանցը

891 59 - 1  
S-392 6979 Կ 6979 6979

ԿԱՄՍԱՐ ՏԵՐ-ԴԱՒԹԵԱՆՑ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1601  
4001



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպագր. Վարչական Հրատ. Ընկ. || Տիպ. Գրադ. Իզդ. Տ—վա.

Большая Банкская ул.


1903

1900 № 08. 2013

58322

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 4 февраля 1903 года.



Նուեր սիրալիր եղբօրս

Զարմայր Տէր-Բաղդասարեան

Տ է թ ~ Դ Ա Ի Թ Ե Ա Ն Ց Ի Ն

Առաջը սիրու ուսո՞

Առաջը սիրու ուսո՞ առաջը սիրու ուսո՞


Առաջը սիրու ուսո՞ առաջը սիրու ուսո՞

Առաջը սիրու ուսո՞ առաջը սիրու ուսո՞



Ապօստար Տէր-Գևալքեանց

3


**ՄՐՏԻՍ ԴԱՐԴԻ**

Երբ որ հիւանդ սրտիս դարդը  
 Դէմքիս վերայ երկայ,  
 Դու մի վախիր, այ իմ հոգեակ,  
 Թէ ես արդէն վաղ մեռայ:  
  
 Երբ որ տեսնես մաշուած կուրծքս  
 Եւ սև աչքումս արտասուր,  
 Դու մի ցաւիր, այ իմ հոգեակ,  
 Եւ մի անիր լաց ու սուզ:  
  
 Երբ որ տեսնես ինձ շղթայած՝  
 Բանտարկում են, մի հոգա,  
 Ես կը ջարդեմ շղթաները,  
 Յանկարծ տեսնես դուրս եկայ:

Երբ որ տեսնես ես թռչում եմ  
Այն ամպելից էլ վերև,  
Իմացիր որ ես գնում եմ  
Քերելու ձեզ լոյս արեւ:

Երբ որ տեսնես փոքրիկ առուն  
Դրսից ծածկված սառուցով,  
Իմացիր որ նա կանդնած չէ,  
Նրա ջուրը կ'երթայ ծով:

Երբ որ տեսնես հոգիս հանդարտ,  
Սառած սրտումն սև արիւն,  
Իմացիր որ ունեմ ես դարդ,  
Քեզ օրինակ այդ առուն:

Եր որ տեսնես Դերէտ գետում<sup>1)</sup>  
Ալիքները շուտ կորան.  
Իմացիր որ այդպէս և մենք  
Շուտով կ'իջնենք գերեզման:

Երբ իմանաս, որ իմ դէմը  
Խորհուրդ կ'անեն, վնաս տան,  
Ինձ մի հարցնիր ցաւիս պատճառը,  
Դոքա ունեն ապաստան:

Երբ որ տեսնես իմ երեսից  
Վիշտ ու մորմոք հեռացան,  
Իմացիր որ մտան նոքա  
Իմ հոգու լուռ գերեզման<sup>1)</sup>:

1867թ. Թէլաւ:



### ՊԱՆԴԻՏԻ ԵՐԳ

Ըստ եղանակին Սիրեկան քեզ համար,,  
մ անբազդ, թշուառ կեանք,  
Մընացիր օտար,  
Գիշերն քուն շունեմ,  
Ցերեկն էլ դադար:

Թէ մի ժամ ուրախ եմ,  
Տասը ժամ տիսուր,  
Ուկեայ օրերս  
Անցնում են 'ի զուր:

1) Լորդ Բալբոն:

1) Օձուն և Սանահին գիւղերի մօտ:

Անցնում են, ախ, 'ի զուր  
Երջանիկ օրերս.

Օտարութեան մէջ  
Թուլացան ոտներս:

Միթէ ես կարող եմ  
Սիրել այն դաշտեր,  
Որի հողի մէջ չեն  
Ծաղված իմ պապեր:

Եւ որի մանուկներն  
Խորթ են ինձ համար,  
Խորթ է և լեզուն,  
Մարդիկն էլ օտար:

Իմ երկրի սառ ջուրը  
Քաղցր է ինձ համար  
Քան օտար երկրի  
Մեզն ու շաքար:

Իմ երկրի նմանըն  
Չ'կայ մի աշխարհ,  
Որ իմ ցաւերին  
Դժնէր մի դեղ, ճար:

Ինձ համար ողջ մէկ է  
Ամառն ու ձմեռ.

Օտարութիւնը  
Թոյն է մահաբեր:

Ով գթած Ստեղծնի,  
Լեր ինձ օդնական,  
Որ ես Քեզ փառք տամ  
Այժմ և յաւիտեան:

1867 թ. Թէլաւ.



Հ Ա Ր Բ Ո Ղ Ի Կ Տ Ա Կ Լ

(Փոխադրութիւն)

Ընկերք, մաշուելով պօդագրայից,  
Շուտ կը հեռանամ ես ձեզանից.  
Կարճ միջոցում լինելով մեռած՝  
Չէք տեսնիլ ինձ այսպէս հարբած: (2 ան-  
Այն գինետան մէջ ինձ Ծաղեցէք, գամ):  
Ուր ամենից շատ հարբում էի,  
Այնտեղ գերեզման պատրաստեցէք,  
Որ տակառի տակ ես պարկէի:

Առներս դէպի պատն արէք,  
 Խոկ գլուխս դէպի ծորակը,  
 Որ երկու ձեռքով բռնէի ես,  
 Հացօղիով լիք մեծ բաժակը:  
 Ինձ հին տկի մէջ, պատանի տեղ,  
 Լաւ փաթաթեցէք, կուպր քսեցէք,  
 Եւ որպէս մեզքիս թողութեան դեղ,  
 Կէս թունկի գինի բերանս ածէք:  
 Անձէս թազեցէք, չածէք զանգակ,  
 Ի սէր Աստծոյ, թազմանս ժամանակ,  
 Բաժակ զարկէք դորա փոխանակ,  
 Գինով թրջեցէք հարբողիս դիակ:  
 Դամբանական դուք չըգրէք բառ,  
 Որքան տպրելուս, վարքիս համար:  
 Միայն ասել հինգ բառ մեծատառ.  
 Սա էր արբեցող սաստիկ թշուառ:  
 Բայց դեռ բանի որ ես չեմ մեռել,  
 Բերէք խմեմ կէս թունկի գինի,  
 Հոգեհանս գինու ոսւմբի կարծելով,  
 Գուցէ ձեռք չըտայ, երբ հարբած տեսնի:

1868թ. Թէլաւ.



ԳԱՐՆԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՐՇԱԼՈՅԵՍԸ  
 (Փոխադրութիւն)

Թռիր շուտով, ով երեկոյ,  
 Այս մեր խաղաղ դաշտերում,  
 Ուր օրիորդք ծաղիկներից  
 Դափնիներ են յօրինում:

Ով արշալոյս երեկոյեան,  
 Քեզ երգում ենք մենք նոր երգ,  
 Քաջ գլուխելով, որ կընդունէք,  
 Այս մեր անկեղծ պարզ նուէրք:

Ահա, արդէն հովիտներում  
 Գիշերային ժամըն հասաւ.  
 Բազմադարեան կաղնու գլխին  
 Վերջին լոյսը չըքացաւ:

Ո՞հ, ոնց խաղաղ է ամեն տեղ,  
Օդը ի՞նչպէս հովացաւ,  
Եւ մերձակայ անտառումը  
Սոխակն երգել սկսաւ:

1868թ. Թէլաւ.



### ԼՈՒՍԱԽՈՐ ԳԻՇԵՐ

Ըստ եղանակին՝  
„Հալոց աղջիկներ“.

Ինչու այսչափ քեզ, լուսաւոր գիշեր,  
Վառուած սիրում եմ հօգուցս առաւել.  
Ինչու քեզանում պօիետն երկնածին,  
Զարկում է իրան ոսկեայ քնարին:

Եւ ինչու համար եմ սիրում ես քեզ,  
Այ, գու իմ խաղաղ գիշեր պարզերես,  
Երբ գու, ոչ թէ ինձ, այլ ուրիշներուն  
Պարզեում ես միշտ հանդիսատ, անուշ քուն:

Իմ ինչիս են պէտք քո լուսինն, աստղեր,  
Քո հորիզոնը ու թուխ թուխ ամպեր.  
Ինչու ես սիրեմ քո լոյսդ պայծառ,  
Երբ իմ օրերս անցնում են խաւար:

Ոչ մի բան այնքան մութ չէ աշխարհում,  
Որքան հոգեկան գիշերն է լինում,  
Ոչ մի բան այնքան չի տանջում մարդուն,  
Որքան տանջում է գիշերն անցուն:

Իմ ինչիս է պէտք քո գիշերային  
Խոր լուսութիւնը երկրի երեսին.  
Երբ ես ծանրացած անթիւ հօգսերով՝  
Մտքով տանջում եմ հազար վէրքերով:

Գիշեր, ես ինչու սիրեմ քո լուսութիւն,  
Միթէ նա կըտայ ինձ հանգստութիւն.  
Միթէ կարող է ինձ միթարել  
Եւ աչացս դառն արցունքը սրբել:

Ինքս էլ չը գիտեմ, լուսաւոր գիշեր,  
Թէ ինչու այսչափ ես սիրում եմ քեզ.  
Ինքս էլ չը գիտեմ թէ ինչու քեզնից  
Զեմ կարողանում անջատուել շուտ ես:

Ինքս էլ չը գիտեմ, լուսաւոր գիշեր,  
Թէ ինչու այսչափ ես սիրում եմ քեզ.

Գուցէ հենց այս է դորա պատճառը,  
Որ շատ հեռու եմ իմ հանդիստ բաղդէս:

1872թ. Ստալրապօլ. (Առվկասում)



### ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂԹՔ

Տէր, ես մանուկ եմ տըկար,  
Հոգւով ծարաւ գիտութեան.  
Պարգևիր Դու, ով մեր Հայր,  
Շնորհը և միտք հայ մանկան:  
Առաքիր ինձ, Տէր Յիսուս,  
Ոէր՝ իմ լեզուն լաւ սորուել.  
Ցանկայ թօթով իմ լեզուս  
Քեզ այդ լեզուով աղօթել:  
Իմ այդ լեզուով մայրենի  
Շատ են գրած Քո գործեր.  
Ուրեմն լեր ինձ հովանի  
Որ կարդամ այդ սուրբ դրբեր:

1873թ. Ստալրապօլ.



### ԵՐԳ

Ըստ եղանակին

„Կաкъ у нашихъ у воротъ...“



Հա, մեր տան առաջին  
Զրով լիքը մի լիճ կայ:  
Տրա լի լա, տրա լի լա,  
Զրով լիքը մի լիճ կայ:  
Փեսայացուն ձին բերեց  
Մեր գրան մօտ ջուր տուեց:  
Տրա լի լա, տրա լի լա,  
Մեր գրան մօտ ջուր տուեց:  
Փայտից կապեց իր ձիուն.  
Խնդրեց աղջկան սիրուն:  
Տրա լի լա, տրա լի լա,  
Խնդրեց աղջկան սիրուն.

«Սիրուն աղջիկ, իմ հոգի,  
Խնդրեմ նժոյգ ձիս պահի.

Տրա լի լա, տրա լի լա,  
Խնդրեմ նժոյգ ձիս պահի:  
Խնդրեմ նժոյգ ձիս պահի,  
Նժոյգս հազարներ արժի:

Տրա լի լա, տրա լի լա,  
Նժոյգս հազարներ արժի:  
Որ չը պոկի իր սանձը,  
Որ չը կոտրի իւր թամբը.  
Տրա լի լա, տրա լի լա,  
Որ չը կոտրի իւր թամբը»:

1873 թ. Ստարապոլ.



ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ „Հե յեզжай, գուշին մոյ“.

Մի հեռանալ, մի գնալ հեռու  
Քո աշխարհից, այ իմ սիրեկան,  
Այնտեղ չար մարդիկ, կասեն, խիստ շատ կան.  
Նորա կաշխատեն քեզ վեասելու,  
Մի հեռանալ, մի գնալ հեռու:

Դու էիր իմ յոյսս և իմ կենսատու,  
Ինչու գցեցիր վառ կրակում ինձ դու.  
Ես միշտ կը մնամ քեզ խօնարհ հըլու,  
Իսկ դու ինձանից գնում ես հեռու.  
Աղաչում եմ քեզ մի գնալ հեռու:

Օտարուհիքը սիրել չը գիտեն,  
Նոցա սէրն է միայն բոպէական,  
Հաւատացիր ինձ, ազնիւ սիրեկան,  
Սիրոյ արցունքով քեզ թանալ չեն,  
Մի հեռանալ, մի գնալ աստէն:

1001  
1002  
0001  
0002  
Օտարուհիքը քեզ կը խաբեն,  
Բայց սրտով իսկի չեն սիրել նոքա.  
Կը թունաւորեն օրերդ ոսկեայ  
Եւ քեզ միշտ անհանգիստ կանեն.  
Մի հեռանալ, մի գնալ աստէն:

Ես քեզ այստեղ, սրտիս խորքէն,  
Կերգեմ սուրբ սիրոյ գովասանութիւն,  
Որ դու ես միակ կեանքս ու խնդութիւն,  
Եւ առանց քեզ օրերս դառն են.  
Մի հեռանալ, սիրեկան ջան, մի գնալ աստէն:

1873 թ. Ստարապոլ.



(Փոխադրութիւն)

Աղօթք արա, անմեղ մանուկ,  
Քեզ պահպանող Աստըծուն,  
Որ ինամում է հանապազորդ  
Քեզապիսի աստղերուն:

Քո արցունքի կաթիլները  
Նա համրում է լուռ ու ճիշտ.  
Քեզ պատրաստ է պատասխանել  
Ամենայն տեղ այժմ և միշտ:  
Քո պահապան հրեշտակը  
Գուցէ բռնած մի անօթ,  
Կը ժողովի քո արցունքը,  
Քեզ լինելով լաւ ծանօթ:

Եւ կը տանի դէպի բարձր,  
Այն աստղերից էլ վերև.  
Քո Արարի գահի մօտը,  
Որ նա քեզ տայ մեծ պարգև:


Աղօթք արա, անմեղ մանուկ,  
Պատերազմիր կեանքիդ հետ՝  
Եւ Աստուած տայ քեզ շատ օրեր,  
Որ դու լինիս օգտաւէտ:

1875 թ. Սղնախ.



Գ Ի Շ Ե Ր

(Փոխադրութիւն)



Լռութիւնը խոր գիշերի  
Շուտով տիրեց ամեն տեղ,  
Եւ երկինքը շուտով վառեց  
Իւր բոլորակ լոյս կանթեղ:

Իսկ ցերեկը աղմբկալի  
Լռեց, մտաւ ի խոր քուն.  
րին,

Եւ երկինքը ծածկեց երկ-  
կարծես ոչ ոք չէ արթուն:

Քաղցր քնած ծաղիկները  
Գլուխ գլխի են գլուխ.  
Եւ հինորեայ կաղնիները  
Քչիչոց են սկսել:

Կանաչ, դադրած տերեներով  
Միմեանց նշան են տալիս.  
Եւ պատմում են նորա միմեանց  
Ունայնութիւնն աշխարհիս:

Ավանս, շատ ուշ վրայ հասաւ  
Կէս գիշերը այդ օրը.  
Հասաւ ժամը մեռելների,  
Երբ դուրս կը գան բոլորը:

Դուրս կը գան մուժ գերեզմանից,  
Կը թափառեն խըմբերով.  
Կախարդներն էլ դուրս կը թռչեն  
Անշունչ մարմնից ոև շորով:

Երկրի վրայ այդ ժամանակ  
Տեսիլները, դեերը  
Թափառում են, տարածելով  
Իրանց օդի թեերը:

Ազօթասէր մարդկանց աչքին  
Մարմինները օդային  
Երեալով կէս գիշերին,  
Վախեցնում են ամենքին:

Իսկ գողերը շուտ գնում են  
Գերեզմաններ փորեւու,  
Հողի միջից գեռ նոր թաղած  
Հանգուցեալին հանելու:

Բայց ում վսեմ և համարձակ  
Քայլերի ձայնն է գալիս,

Խաղաղ փողոցների մէջը,  
Սարսափեցնում ամենքին:

Դա կամ դե է, մութը բնից  
Դուրս է եկել մանդալու,  
Կամ աւաղակ, սուրը ձեռքին  
Կերթայ արիւն թափելու:

Ո՛չ, ոչ, դուք շատ սխալում եք,  
Դա երգիչ է սիրահար,  
Սրտի սէրը ցանկայ յայտնել  
Սիրեկանին անպատճառ:

Այդ փողոցի խակ ծայրումը  
Գտնուում էր մի մեծ տուն,  
Որի մէջը բնակում էր  
Սիրեկանը իւր սիրուն:

Սիրահարուած մեր երգիչը  
Կանգնեց այդ տան առաջին,  
Ուր փայլում էր մի փոքր լոյս  
Լուսամուտի հենց միջին:

Վարագոյրը թողնուած էր  
Լուսամտի քամակին,  
Ուր մի թեթև շողը էր բնկած,  
Դա էր նորա սիրած կին:

Շատ ժամանակ երգեց, տանջուեց  
Սաստիկ սիրոյ բորբոքից.  
Շատ սպասեց, բայց չ'ստացաւ  
Մի կտոր նամակ ոչ ոքից։

«Ո՞հ, սառնասիրտ իմ սիրեկան,  
Դու չը գիտես ինչ է սէր.  
Մինչ ցերք մաշուեմ, ասաց երգին,  
Երք խիզճ ու գութ չ'ունիս դեռ։

Ո՞հ, չեմ կարող ապրել երկար.  
Կը գրկեմ շուտ սև ցուրտ հող,  
Զախշախելով սիրտս և քնար.  
«Խելագար է», ասեն թող։

Երկու շաբաթ չը լրացած՝  
Գեղեցկուհիք վախեցան,  
Լուսամուտի տակին սառած  
Երք որ գիշակ մի գտան։

Եւ այն օրից մինչև ցայսօր  
Փողոցները խաղաղ են,  
Ինչպէս մեռած՝ ոչ ձայն հնչի,  
Եւ ոչ շարժի ոչ մէկ զէն։

Գիտէք արդեօք, ում գիշակն էր  
Էնկած այն մեծ տան տակին,

Որին գտաւ անշունչ, մեռած  
Իրան սիրած անգութ կին։  
15 սեպտ. 1876թ. Աղնախ.



ՃՈՐՏՈՒԹԵԱՆ ԱՐԳԱՍԻՔ

(Պոխաղութիւն)

Մի գիւղի մէջ, խոր գիշերին,  
Դեռ մի պառաւ չի քնած.  
Ծունը է կրինում նա անկիւնում,  
Աղօթում է առ Աստուած.  
«Ո՞վ Տէր Աստուած, Տէր Արարիչ,  
Աղօթում եմ Քեզ՝ պահել  
Գիւղատէրին մեր՝ շատ երկար,

Երկար օրեր պարգևել:  
Աղքատութիւնն է ստիպում աղօթել:  
—  
Դիւղատէրը անցանելով  
Այս երբ լսեց, զարմացաւ.  
«Երեխ թէ շատ հարբած է  
Այս միամիտ մեր պառաւ»:  
Իշխանական իւր քայլերով  
Նա պառաւի տուն մտաւ,  
Եւ շատ քաղցրիկ ու մեղմ ձայնով  
Նա պառաւին այս ասաւ,  
«Աղքատութիւնն է ստիպում աղօթել»:  
—  
«Այս, պարոն, մի ժամանակ  
Ութ կով ունէի իմ գոմում,  
Խոկ ձեր պապը, ողորմածիկ,  
Մեր արիւնն էր խիստ ծծում.  
Խըլեց կովս նա իմ ձեռքից,  
Զը նայելով իմ լացին,  
Կովս կորաւ, երեխայըս  
Ինձ հետ սոված մնացին.  
Աղքատութիւնն է ստիպում աղօթել:  
—  
Շատ անէծքներ ես թափեցի  
Պապիդ վերայ վրշտացած,  
Լսեց շուտով և խիստ պատժեց  
Նորան կարողն այն Աստուած:

Պապը մեռաւ, հայրդ սկսեց  
Դառնալ գիւղի մեր իշխան,  
Երկու լաւ կովս շուտով խլեց.  
Աստուած բարի տայ նորան:  
—  
Ես ձեր հօրը գիշեր, ցերեկ  
Անիծեցի անխափան,  
Մինչև նորան, ինչպէս պապիդ,  
Շուտով խլեց գերեզման:  
Այն ժամանակ եկաք մեր գիւղ  
Եւ տիրեցիք դուք շուտով,  
Եւ խլեցիք դուք ինձանից  
Դարձեալ պարարտ իմ չորս կով.  
Աղքատութիւնն է ստիպում աղօթել:  
—  
Այժմ, երբ որ դուք կը մեռնիք,  
Թողնելով և մի որդի,  
Վերջին կովս, նա անպատճառ,  
Շուտ կը խլի, կը մորթի:  
Ո՞վ Տէր Աստուած, Տէր Արարիչ,  
Աղօթում եմ Քեզ՝ պահել  
Գիւղատէրին մեր շատ երկար  
Երկար օրեր պարգևել.  
Հա, աղքատութիւնն է ստիպում աղօթել.



տանջուիր, Մշեցի մշակ,  
կոշտ շալից կարած քո փա-  
լանի տակ.  
Աչքդ արտասուալից, դէմքդ  
միայ տխուր,  
**Թափած արտասունք-լոռութեամբ կուլ տուր:**  
Գնա գլխաքարշ մէյդանից շուտ տուն,  
Ա՛խ-վակս քաշելով գիշերներն անքուն.  
Թող սիրտդ մաշեն ցաւերն տրտմութեան,  
Երեէք մի սպասիր մարդկանց դթու-  
թեան:

Ամենայն տեսակ անվերջ չարչարանք,  
Ահա թէ ինչ է մարդս և իր կեանք.

Եւ մրգան դառն արտասունք է թափում  
Մահկանացու մարդն երկրային կեանքում:  
Մեծ անբաղդութիւնն երկար չէ տեսում,  
Փիլիսոփաներն այսպէս են ասում:  
Իսկ փոքրների վերայ աշխարհում  
Յիմարք են միայն ողբում ու լացում:  
Կարճ է մեր կեանքը և երբ կը մեռնես,  
Տխուր կը նայեն քո սառը մարմնին.  
Մի քանի արցունք թափելուց յետոյ  
Պահ կը տան քեզ մութ, սառ գերեզմանին:  
Անգութ է երկինքն և վճիռն մահուան,  
Աստուած են կանչում թէ հայրն, թէ  
տղան.

Արձագանք չկայ առ Տէրն գանգատի,  
Իբր ձայն բարբառոյ մէջ անապատի:  
Ո՞հ, մի լար, պէտք չեն, պէտք չեն արտա-  
սունք,

Համբերիր, ինչպէս կանեն իմաստունք.  
Տէրն ինքն է տալիս և ինքն է տանում,  
Իսկ դու նորա վերայ գանգատում ես ում:  
Թող քնէ հանգիստ մինչ օրն յարութեան  
Մոռանայ երկրի աղմուկն անպիտան.  
Հիւր էր նա երկրիս մէջը աննշան,  
Չի դգալ կրած ցաւերն զանազան:  
Դու մի արտնջալ, որ մահն է հզօր.  
Թէ իշխան լինիս և թէ թագաւոր,


Նա քո դռանը կը չոքի մի օր,  
Թէկուղ իրան տաս աշխարհը բոլոր։  
Դու մի տրտնջալ, որ Աստուած մարդուն  
Ստեղծեց հողից թոյլ ինչպէս ես ու դուն.  
Մարդու թռքերը և սիրտը նոյնպէս  
Գործեց թոյլ թելից հաշխայի պէս։  
Թէև Նա պէտք է նոցա շղթայէր,  
Քարից, երկաթից էլ ամուր պահէր,  
Բայց գեռ չը բացուած ծաղկի պէս մարդիկ,  
Թառամում են շուտ և շատ ընտանիք։  
Դու մի տրտնջալ, որ տերեները  
Աշունք ժամանակ թափառում են ծառից.  
Այդպէս են բնութեան մէջ օրէնքները,  
Եկող գարունքին կը ծլեն նորից։  
Ինչպէս մի խեղճ կոյր գու թափառում ես,  
Թէ ուր ես գնում, ինքդ էլ չը գիտես.  
Աստուած սիրողին աշխարհս նեղ է,  
Փշոտ ճանապարհ և շատ խոր տեղ է։  
Ամբողջ աշխարհը մի գերեզման է,  
Ամբողջ երկիրը մի մութ տապան է.  
Ուր մարդիկ ոչ բարդ, ոչ հանգիստ  
ունեն,  
Ամեն բան երկրում շուտով անցնում են։  
Անմահ են միայն խօսքերը բարի.  
Կեանքիդ գառնութիւնն ամք, մի գագարի.

Ո՞չ ոք մինչ 'ի մահ և ամեն տարի  
Բաղդաւոր չէ միշտ 'ի մէջ աշխարհի:  
Թէ բաղդ և թէ վիշտ, ողջ անցաւոր են,  
Ամեն բան արագ կորչում, գնում են.  
Ո՞վ կարէ ազատ մնալ այդ բանից.  
Վաղիւն ով գիտէ, ով կայ մեզանից:  
Թէ բաղդ և թէ վիշտ, այդ խօսքեր են լոկ,  
Դոքա ցնորդ են, խաբուսիկ տեսիլ.  
Որոնց հողեղէն մարդկանցից ոչ ոք  
Զի կարող երկար տեսնել կամ լսել:  
Զարմանալի է, որ մի կարճ նամակ,  
Եթէ որ գրէ մարդ մի ժամանակ  
Մի կտոր թղթի կամ քուրջի վերայ,  
Հարկւր տարիներ ամբողջ կը մնայ:  
Տեսէք թէ ինչպէս հին ժամանակը  
Ոչնչացնում է մարդուն մինչ այնքան,  
Որ թղթի կտորն աւելի է ապրում,  
Քան թէ գրող մարդն և իւր գերեզման <sup>1)</sup>:  
Զը կայ աշխարհում իսկ ճշմարիտ բաղդ,  
Կեանքդ չէ երկար, այդու թշուառ մարդ.  
Մածկիր կրծքիդ տակ քո տանջանքները,  
Թող չիմանան քո կեղծ ընկերները:  
Բնութիւնն ինքը սահմանել է քեզ,  
Որ գիշեր ցերեկ աշխատես, տանջուես,

### 1) **Լօլող Բայլոօն:**

Ճակատագրիդ հետ կռուիր միայնակ  
 Քո շալից կարած կոշտ փալանի տակ:  
 Անարդ մարդու պէս շրջում ես անտուն,  
 Գիշերն անհանգիստ մնում ես անքուն.  
 Յոգնիր օրէցօր, տանջուիր չարաչար,  
 Թող քո ընկերդ մի պուտ ջուր չը տար:  
 Թող անարդ մարդը, որ քեզ բամբասի,  
 Եւ թող օրէցօր ոյժդ պակասի.  
 Այդ ճանապարհով կը համես դու շուտ,  
 Քան մենք կը համենքս ամենքս անշուշտ,  
 Կեանքի նպատակին, սառ գերեզմանին,  
 Ուր ոչ վիշտ, ոչ ցաւ չկան բնաւին<sup>1)</sup>:

1901թ. Թիկիս.



1) Կապոօն:



### ԽՐԱՏ ՀՈՂԱԳՈՐԾԻՆ

Վարիր, հողագործ, վարիր քո հողը,  
 Հենց դրա մէջն է քո գանձն ու փողի.  
 Վարիր քո կողիտ, բայց ազնիւ ձեռքով,  
 Որ կերակրուես քո աշխատանքով:

Դու ցանիր ոսկեայ հատիկը արտում,  
 Երբէք չը պահես երկիւզ քո սրտում.  
 Զմեռը կ'անցնի, գարունը կը գայ,  
 Քո ցանած սերմը կը ծլի, վախ չըկայ:

Աշխատանքն է քո հզօր պահապան,  
 Դու բնութիւնից սորվի ամեն բան,  
 Որը գործում է անխոնջ ամեն օր.  
 Աշխատութեան պէս չը կայ բան հզօր:

Դու թռչնից, մինից մի վախիր երբէք.  
 Նոքա բոլորը չեն ուտիլ մէկ մէկ.  
 Դու ինչ ես վախում ցանել սուրբ մտքեր  
 Մտաւոր հողում, որ տան լաւ բերբեր:

Կը գայ ժամանակ, կը ծաղկեն կը կին,  
Անմահ կը մնայ գովեստդ անդին.  
Բայց միշտ դու մնա քո խօսքիդ հաստատ—  
Աղնիւ, համբերող, վեհանձն և հանդարտ:

Ականջ մի դնիր ամեն յիմարի,  
Բամբասողը շատ կան ՚ի մէջ աշխարհի.  
Մէկ կոպէկ չարժէ գոցա դատաստան,  
Սերը սովորին, մոլորին—չոր թան:

1902 թ. Թիֆլիս.



Թ. Գ. Ա. Ի Ո Ր Ե Ւ Շ Ա Պ Ի Կ

Աղասի թարգմ. դրաֆ. Լ. Տուստուից (Արարերէնից):

Ժամանակաւ կար մի մեծ թագաւոր.  
Հիւանդանում է յանկարծ նա մի օր,  
Ժողովում է շուտ իւր վեզիրներին,  
Բոլոր իւր խելօք իմաստուններին,  
Եւ խիստ տղնքալով ասում է նոցա.  
«Գիտէք, եղբայրներ, թէ այժմ ինչ կայ,  
«Եյս փուչ աշխարհում ամենից վատ,  
Գիտէք, որ մահն է, ում անեմ գանդատ:  
Ով որ ինձ մահից փրկել կարենայ,  
Ինչ սիրտը ուղի, ինձնից կ'ստանայ:  
Իմ երկրիս կէսը կը տամ ես նորան,  
Անհամար սոկիք, ակներ պատուական,

Ով գտնէ մի գեղ, փրկարար մի բան,  
Որ ես չը մտնեմ մութը գերեզման։

Իմաստունները ժողով կազմեցին,  
Շատ էլ գատեցին, շատ մտածեցին,  
Թէ ոնց բրժքլեն այդ թագաւորին,  
Ինչպէս օգնական լինեն նեղ օրին։  
Ոչ ոք չ'իմացաւ, չը գտաւ հընար,  
Ոչ մի փրկարար—գեղ ցաւի համար։  
Միայն նոցանից մի ծեր իմաստուն  
Ասաց. կայ հնար փրկել այդ մարդուն.  
Եթէ գտնվի մի բաղդաւոր մարդ,  
Որը չ'ունենայ ոչ հոգս և ոչ գարդ,  
Ու հանենը հագի շապիկը նորա,  
Որ թագաւորն հագնի իւր վերայ։  
Խոկոյն թագաւորն մեր կ'առողջանայ,  
Դարձեալ կը նստի իւր գահի վերայ։

Թագաւորն շուտով տուեց հրաման,  
Որ իւր երկրի մէջ ամեն տեղ մանդան,  
Ինչպէս և լինի, ընկնեն սար ու ձոր,  
Գտնեն ու բերեն մի մարդ բաղդաւոր։  
«Հրամայէ մեղ, ով բաղ թագաւոր,»  
Ասացին. «Ճառայ ենք ձայնիդ բոլոր։»

Եւ մօտի մարդիկն ճանապարհ ընկան,  
Որ շուտ կատարեն այդ խիստ հրաման։  
Բայց չը կար ոչ ոք, ոչ ճորտ, ոչ իշխան,  
Որ ամեն բանով լինէր բաւական։

Մէկը հարուստէր, բայց հիւանդ, տկար,  
Միւսը առողջ էր, բայց աղքատ—թշուառ.  
Մէկը—և առողջ և հարուստ էր շատ,  
Բայց կինն ու որդիք անառակ ու վատ։

Մէկ խօսքով, չը կար մի այնպիսի մարդ,  
Որ հանգիստ ապրէր, ու չ'ունենար դարդ։


Մէկ երեկոյեան, օրի մի օրը,  
Մինչ գեռ հիւանդ էր մեր թագաւորը,  
Նորա մեծ որդին փողոցում տեսաւ,  
Որ մի խեղճ ոքմին այս զրոյցն ասաւ.  
«Այսօր բանեցի ես ամբողջ օրը,  
Զեռից չը թողի խովն ու արօրը.  
Կ'երթամ, կը նստեմ հանգիստ իմ տանը,  
Գեղեցիկ կինս կը փռի սեղանը։  
Ով որ չի եղել կոպիտ գիւղացի,  
Նա և չ'դիտէ արժէրը հացի։

Թէս Հագուստսէ կտաւ, ոչ առջաս,  
Բայց այդ բանիցը ես չ'ունեմ վնաս.  
Ամենայն բանով լիացած եմ խիստ,  
Բաղզը ժպտում է ամեն կողմից միշտ։  
Ոչ ծարաւեմ ես և ոչ էլ սոված,  
Քաղցր կը քնեմ, փառք բեղ, իմ Աստուած։  
Ուրիշ ոչ մի բան ինձ չէ՝ հարկաւոր,  
Ոչ ոք ինձ նուան չը կայ բաղդաւոր։

Երբ որ այս զբոյցն վերջացաւ, անցաւ,  
Եւ թագաւորի որդին իմացաւ,  
Ուրախութեանը չափ, սահման չը կար,  
Սկսեց փաղել ինչպէս խելագար։  
Իսկոյն հրամայեց՝ այդ մարդուն բերել,  
Նորա հագիցը շապիկը հանել,  
Ու դրա փոխանակ տալ նորան շատ փող,  
Որքան կամենայ, և դաշտեր կամ հող։  
Իսկ այդ շապիկը տալ թագաւորին,  
Որի կեանքը խիստ թանկ է բոլորին։  
Դեսպանները տարան բաղդաւոր մարդուն  
Թագաւորի մօտ, որ էր խիստ անքուն։  
Նորա շապիկը հանել կամեցան,  
Բայց գիտէք ինչպէս սաստիկ զարմացան։

Երբ նոքա տեսան, որ մարդն բաղդաւոր  
Ոչ շապիկ ունի և ոչ տակի շոր։  
Նա կեանքից գոհ էր, թէպէտե տկոր,  
Եւ այդպէսներն են միայն բաղդաւոր։

1902թ. Թիֆլիս։





## Ո Ս Կ Ի Զ Կ Ե Ւ Կ

(Թարգմանութիւն Պուշկինից)

Ա.


Մի ծերունի մարդ և իւր պառաւ կին,  
Հանդիստ ու խաղաղ բնակւում էին  
Երեսուներեք տարի միասին,  
Մի հին գետնատան, մեծ ծովի ափին։  
Ծերը ուռկանով միշտ ձուկն էր բռնում,  
Իւր պառաւ կին էլ ըրթից թել մանում։

Մի անդամ ծերը ծովն ուռկան ձգեց,  
Ուռկանն ջրից միայն տիզմ հանեց։  
Նա երկրորդ անդամ ուռկան ձգեց ծով,  
Դուրս եկաւ ուռկանն ծովային խոտով։  
Իսկ երրորդ անդամ, երբ ուռկան ձգեց,  
Մի ոսկի ձկնիկ նա ծովից հանեց։  
Ոսկի ձկնիկը ինդրել ոկսեց,  
Մարդկային լեզուով ծերին աղաչեց.  
«Թո՞ղ ինձ, ով ծերուկ, որ ծովը գնամ,  
Իմ փոխարէն քեզ մեծ փրկանք կը տամ.  
Ինչ սիրտդ ուղի, երբ որ կամենաս,  
Թանկադին գրաւ ինձնից կ'ստանաս»։

Ծերը զարմացաւ, սաստիկ սարսափեց,  
Երբ ձուկն մարդու պէս խօսել սկսեց։  
Երեսուներեք տարի ձկնորս էր,  
Բնաւ չէր լսած, որ ձուկը խօսէր։  
Թողեց ծերուկը այն ոսկի ձկան,  
Այս քաղցր խօսըը առելով նորան։  
«Ոսկի դու ձկնիկ, գնա, Տէր ընդ քեզ,  
Քո աղատութեան գինը պէտք չէ մեզ։  
Գնա քեզ համար դու այդ կապոյտ ծով,  
Եւ այնտեղ աղատ լողա ապահով»։

Բ.

Տուն գարձաւ, պատմեց ձկնորս ծերունին  
Այս մեծ հրաշքը նա իւր պառափն.



«Այսօր բռնեցի մի ոսկի ձկնիկ,  
Զուկը խօսում էր, ինչպէս մենք, մարդիկ.  
Խնդրեց բաց թողնել իրան կապոյտ ծով,  
Թանկագին փրկանք ինձ խօստանալով:  
Փրկանք պահանջել չը համարձակուեցայ,  
Ուրեմն թողեցի, որ ծովը գնայ:  
Պառաւը ծերին շատ յանդիմանեց,  
Սաստիկ բարկացաւ, յիշոցներ տուեց.  
«Յիմար, պարզամիտ, այ դու անասուն,  
Առանց փրկանքի ինչու եկար տուն.  
Նորանից գոնէ նոր տաշտ ինդրէիր,

Մերը կոտրած է, — միթէ չ'գիտէիր»:  
Կապոյտ ծովի մօտ ծերուկը գնաց.

Ծեսնում է ծովը հանդարտ ծըփծըփաց:  
Ոմէկի ձկնիկին կանչել սկսեց.

Զուկը լողալով՝ եկաւ հարցրեց.  
«Ի՞նչ ես կամենում, ով ալեսր ծեր».

Ծերը ողջունեց. պատասխանն այս էր:  
«Ոզորմիր ինձի, թագուհի ձկնիկ,

Խախատում է ինձ իմ պառաւ կնիկ.  
Ինձ, խեղճ ծերունուս, հանդիստ չէ թողնում,

Իւր համար մի նոր նա տաշտ է ուզում:  
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական,

Բայց այդպէս մնալ չուզէ մէկ վայրկեան»:  
«Դու մի վշտանար, ասաց ձկնիկը,

Այսօր կունենայ նոր տաշտ քո կնիկը»:

Գ.

Իւր պառաւի մօտ ծերունին գարձաւ,

Մէկ նոր տաշտ նորա առաջը տեսաւ.  
Բայց կինն աւելի սկսեց նախատել,


Ծեր մարդու դլմին անէծքներ թափել»  
«Ծերուկ, դու անխելը, պարզամիտ յիմար

Ի՞նչ շահ դորանից, որ տաշտ ստացար.  
Տաշտն ինչ մեծ վարձ է, ձկան մօտ դարձիր,

Ողջոյն տուր նորան, մի խրձիթ ուզիր»:  
Ահա նա գէպի կապոյտ ծով գնաց,

(Կապուտակ ծովն էր փոքր ինչ պղտորուած)

Սկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Եկաւ ձկնիկը, հարցրեց ծերուկին.  
«Ի՞նչ ես կամենում, ով ալևոր ծեր»:  
Ծերը ողջունեց. պատասխանն այս էր.  
«Ողորմիր ինձի, թագուհի ձկնիկ,  
Նախատում է ինձ իմ պառաւ կնիկ.  
Ինձ խեղճ ծերունուս հանդիսաւ չէ թողնում,  
Կատղած պառաւս խրճիթ է ուզում»:  
«Տէր ընդ քեզ, դնա, ասաց ձկնիկը.  
Այսօր կունենայ խրճիթ քո կնիկը»:  
Ծերունին գնաց կրկին գետնատուն,  
Բայց նորա տեղը տեսաւ մի լաւ տուն».



Իր հին գետնատան հետքն էլ չէ գտնում:  
Ծեծ զարմանքիցը աջքին չէ հաւառում»

Տեսաւ առջեւ մի տուն պատուական,  
Տանիքի վերայ ծերմակ ծխահան.  
Աղիւսից շինած սպիտակ պատեր,  
Ու կաղնեայ փայտից տաշած մեծ դռները  
Պատուհանի տակ պառաւը նստած,  
Հայհոյեց մարդուն և յետոյ ասաց.  
«Անշնորհ ծերուկ, խրճիթ խնդրեցիր,  
Սյոյ շընչին բանը մեծ բաղդ կարծեցիր»  
Գնա դէպի ծով, գլուխ տուր ձկան,  
Ու յայտնիլ նորան այս իմ հրաման.  
Զեմ ուզում մնալ աղտոտ շինական,  
Ուզում եմ լինել հին աղնուական»:

Դ.

Ահա նա դէպի կապոյա ծով գնաց,  
(Բայց կապոյտ ծովը շատ էր պղտորսուած)  
Սկսեց կանչել ոսկի ձկնիկին,  
Եկաւ ձկնիկը հարցրեց ծերուկին.  
«Ի՞նչ ես կամենում, ով ալևոր ծեր»:  
Ծերը ողջունեց. պատասխանն այս էր.  
«Ողորմիր վերաս, թագուհի ձկնիկ,  
Խիստ է կատաղել իմ քաւթառ կնիկ,  
Ինձ, խեղճ ծերունուս հանդիսաւ չէ թողնում,  
Եւ գեղջուկ մնալ էլ նա չէ ուզում.  
Զէ ուզում մնալ աղտոտ շինական,  
Ուզում է լինել հին աղնուական:  
«Տէր ընդ քեզ, դնա, ասաց ձկնիկը,  
Աղնուական է այժմ քո կնիկը»:

Մերունին դարձաւ պառակի մօտ տուն,  
Եւ ինչ է տեսնում. բարձր վերնատուն.  
Պատշգամբի մօտ պառաւը կանդնած:  
Ինչպէս մի խաթուն, զուգուած, դար-  
դարուած:  
Սամոյր բաճկոնակ ունէր նա հաղին,  
Դիմին դիպակէ գլխարկ թանկադին.  
Մարդարիտներով վիզը զարդարուած,  
Ուկի մատանիք մատներին շարած:  
Ատներին ունէր կարմիր կօշիկներ,  
Եւ իւր առաջին հլու ծառաներ.  
Պառաւը նոցա սաստում, ծեծում էր:  
Մազերից բռնում ու քաշը շում էր:  
Մերը յարդանքով ասաց իւր կնկան.  
«Ողջոյն, տիրուհի, հին աղնուական,  
Կարծեմ, որ այժմ գոհ ես, իմ աստղիկ»:  
Բղաւեց վերան իւր պառաւ կնիկ,  
Եւ հրամայեց, որ գոմում մնայ,  
Այնտեղ ծառայէ և իւր մօտ ը դայ:

Ե.

Մի ըանի շաբաթ հաղիւ անցկացաւ,  
Պառաւ տիկինը կրկին կատղեցաւ.  
Կրկին ձկան մօտ զրկեց ծերուկին,  
«Շուտով դուկերթաս, ասում է մարդին.  
Կողջունես նրան, կասես գու ձկան.  
Զէ ուզում մնալ հին աղնուական,

Կամ մի հասարակ, լոկ իշխանուհի,  
Այլ կամենում է լինել թագուհի»:  
Երբ այս խօսքերը լսեց ծերունին,  
Դողաց ու ասաց նա իւր պառաւին.  
«Խսպառ գժուել ես, այ իմ չար պառաւ,  
Գլխիս դարձել ես մի ճշմարիտ ցաւ.  
Դէմքիդ, շարժուածքիդ միթէ չես նայում;  
Որ թագուհի էլ ես լինել դու ուզում:  
Դէ, բաւական է, այ ագահ քաւթառ,  
Կը ծիծաղեցնես դու բոլոր աշխարհ»:  
Աւելի վատթար պառաւը կատղեց,  
Մի ամուր ապտակ ծերուկին զարկեց.  
«Ի՞նչպէս ես կալող, յանդուզն յիմնի,  
Իմ պէս տիկնոջ հետ վիճել կոպտաբար.  
Քեզ հրամայում եմ գնալ դէպի ծով,  
Թէ կը դիմոգրես կերթաս ծեծուելով»:  
Դէպի կապոյտ ծովը ծերունին գնաց,  
(Տեսաւ կապոյտ ծովն արդէն սեացած)  
Սկսեց կանչել ոսկեայ ձկնիկին.  
Եկաւ ձկնիկը, հարցը կը ծերուկին.  
«Ի՞նչ ես կամենում, ով ալեռը ծեր.  
Մերը ողջունեց, պատասխան այս էր.  
Պառաւ կնիկս էլի է կուռմի,  
Հին աղնուական մնալ չի ուզում:  
Զէ լսում բնաւ ուրիշի խրատ,  
Ուզում է լինել թագուհի աղատ»:  
«Ճէր ընդ քեզ, գնա, ասաց ձկնիկը,  
Աղատ թագուհի դարձաւ բո կնիկը»:

Մերը պառաւի մօտ վերադարձաւ,  
 Առջևն արքունիք, պալատննոր տեսաւ.  
 Տեսաւ իւր կնկան ճաշի վրայ նստած.  
 Այդ պալատներում թագուհի բազմած:  
 Իշխանք, ազնիւներ թագուհու համար  
     Պատուական դինի ածում անդադար:  
 Սեղանի առջևը պառաւն էր նստել  
     Վերան հազար մի կերակուր դարսել.  
 Պառաւն ուտում էր շատ անուշեղէն,  
     Անծանոթ բաներ և խմորեղէն:  
 Չորս կողմում կանգնած խիստ պահապաններ,  
     Ուսերին բռնած շատ սուր տապարներ:  
 Երբ աեսաւ ծերը, սաստիկ սարսափեց,  
     Ոտքերն ընկնելով նորան ողջունեց,  
 «Ողջոյն քեզ, ողջոյն, ով ահեղ դշխոյ,  
     Խոմբաւական ես քո կեանքից և դոհ...»:  
 Պառաւը ծերի վրան չը նայեց,  
     Միայն պալատից քըշել հրամայեց.  
 Իշխանք, ազնիւներ շտապով վաղեցին.  
 Ծերին ծեծելով դուրս վռնդեցին:  
 Դանապաններն էլ կանգնած տան շեմքին,  
     Քիչ մեաց կացնով, որ սպանէին:  
 Իսկ ժողովուրդը ծիծաղեց վրան.  
     «Այդ քո պատիմն է, անմիտ, անպիտան,  
 Թող այս քեզ լինի նոր դաս և խրատ,  
     Որ չ'անդգնես ցանել կտաւառաւ»:

Մի քանի շաբաթ հազիւ անցկացաւ,  
     Պառաւ թագուհին խսպառ կատղեցաւ.  
 Նա հրամայեց իւր իշխաններին,  
     Գտնել և բերել շուտ իւր ամուսնին:  
 Գտան ծերուկին, նորա մօտ տարան.  
     Կնիկը դուռաց և ասաց նորան.  
 «Դնա դէպի ծով, գլուխ տուր ձկան,  
     Ու յայտնիր նորան իմ այս հրաման.  
 Զեմ ուզում մնալ ազատ թագուհի,  
     Ուզում եմ դառնալ ծովի տիրուհի:  
 Ովկիան ծովերում ուզում եմ ապրել,  
     Ուսկի ձկնիկին ինձ ծառայ բռնել»:  
 Զը համարձակուեց ծերը ձայն հանել,  
     Կամ մէկ հակառակ խօսք նորան ասել:  
 Դէպի կապոյտ ծով ծերունին գնաց,  
     Տունում է ծովին սև մրրիկ պատած.  
 Սլիքներն ուռչում, սար էին դառնում,  
     Ահեղ փոթորիկն դոչում էր, դոռում:  
 Սկսեց կանչել սևի ձկնիկին,  
     Զուկը մօտ լողաց, հարցրեց ծերուկին.  
 «Ի՞նչ ես կամենում, ով ալեոր ծեր»,  
     Ծերը ողջունեց, սիրան էր անհամբեր.  
 «Ողորմիր ինձի, թագուհի ձկնիկ,  
     Հանգիստ չի տալիս ինձ իմ չար կնիկ.  
 Զէ ուզում մնալ ազատ թագուհի,  
     Ուզում է դառնալ ծովի տիրուհի»:

Ովկիան ծովերում ուղում է ապրել,  
 Քեզ էլ ծառայի մի պաշտօն յանձել։  
 Զկնիկը ծերին չը պատասխանեց.  
 Եւր պոչով ջրին նա կամաց խփեց,  
 Ու գնաց ծովի խորքում թագ կացաւ,  
 Եւ այնուհետեւ էլ չերեցաւ։  
 Երկար սպասեց ծերուկը նորան,  
 Բայց ոսկի ձկնիկը տուեց պատասխան։  
 Գլխակոր դարձաւ պառաւի մօտ տուն,



Տեսաւ առաջին գարձեալ գետնատուն։  
 Եւ իր պառաւը շեմքումը նստած,  
 Իսկ նորա առաջ կոտրած տաշտն ընկած։  
 1878 թ. Թիֆլիս։

Նանօթ. Այս հէքիաթը հայերէն լիդուով առաջին  
 անդամ թարգմանել է Կամսար Տէր-Դաւթեանցը։

Հրատ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0370105

58322

891.99  
22-45